

ԵՇԱԿՈՐՄԱՐԴԱՆՑ ԿՅԱՆՔԸ

Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ.

ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԻ

1869—1883

Պ Բ Ա Ր Ա Յ

ՆՅԱԿԱԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՐՈՒԹ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1869 - 1993



ՅԵՐԵՎԱՆ - 1993

891. 981. 092 (Հայոց)



Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՂԱԿԱՆԻ ՄԱԿԱՐՅՈՒՅ

Յ Ե Վ .

ՊԱՏԱԿԱՆԸՆԻՐՅՈՒՅ

1869 — 1883

A 42599
11



ՊԵՏՐՈՎ
ՀԱՅԵՐԿԱԿԱՑ ՄԱԿԱՆԻ ԳՈՎԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴ





Հովհաննես Թումանյանն իր մանկությունն ու պատանեկությունը անց ե կացրել Լոռում։ Մանկությունը՝ իր ծննդավայր Դսեղ գյուղում ու նրա սարերում, իսկ պատանեկությունը՝ Զալալ-Ռուլում (Ստեփանավանում), ոկսած տասը տարեկան հասակից, յերբ հայրը նրան տանում ե Ստեփանավան և տալիս այն՝ տեղի նորաբաց յերկսեռ դպրոցը։

Այնուհետև, 1883 թվի աշնանը նա փոխադրվում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցը, վորտեղ սովորում և մինչև 1886 թիվը։

Այսպիսով Թումանյանն իր կյանքի առաջին 14 տարին անց ե կացրել Լոռում, իսկ հետո, մոտ 40 տարի, մշտապես ապրել է Թիֆլիսում։

ՀԻՆ ԼՈՌԻՆ

Թումանյանը ծնվել է 1869 թ., փետրվարի 7-ին (հին տոմարով) Լոռու Դսեղ գյուղում, գյուղական մի հին ընտանիքում։

Նա տան առաջին յերեխան եր. իրենից փոքր ունեցել է չորս յեղբայր և յերեք քույր։

Այն ժամանակ, յերբ ծնվել է Թումանյանը,

մեղանից մոտ 70 տարի առաջ, Լոռին և Դսեղ գյուղը այնպես չեն յեղել, ինչպես տեսնում ենք հիմա:

Լոռու այն ձորում, Քոլագերան կայարանի մոտերը, ուր 1898 թվից Դեբեղ գետին դուգահետ յերկաթուղագիծն եւ անցնում, իսկ այժմ Զորագեսի ելեքտրակայանը լուսավորում է չորս կողմերի ձորերն ու գյուղերը, ուր ոճավառույտ լեռնուղիներով ավտոներն են սլանում, այնտեղ, մեղնից մոտ 70 տարի առաջ, մուշթն եր ու խավար, վայրի և ամայի:

Լոռու գյուղերն այն ժամանակ ցրված, իրարից կտրված եյին դժվարանցանելի ճանապարհներով, ծերպերով ու կածաններով:

Գյուղացիները խավար ու տգետ, թառած իրենց լեռների վրա, ապրում եյին՝ չքավորները—ծխոտ ու խարխուլ գետնափոր տներում, իսկ ունկորները՝ գյուղատներում։ Ապրում եյին մեծ գերդաստաններով, հսկախ, նույնիսկ, 60—70 հոգով՝ նահապետական կյանքով, սարի ու դաշտի աշխատանքով, փակ ու ինքնամփով։

Այն ժամանակ հին, նահապետական լոռին անծանոթ եր քաղաքին ու նրա կուլտուրային։ Քաղաքի հետ յերթեկությունը կատարվում եր ձիով կամ ֆուրգոնով, վոր տեսում եր որեր, զարաթներ...

Հանգստի ժամերին գյուղացիների հաճույքը զբարույցն եր—պատմություններ իրենց նախնիների կյանքից, հին-հին քաջերից և իգիթներից, գյուղի ու սարի կյանքից՝ համեմած առակներով ու խաղերով։ Նրանք իրենց կյանքն անց եյին կացնում «... դարնանը սարերի լանջերին, ամառը անտառների շվա-

քում, ձմեռը պատերի տակին արևկող արած, իսկ
գիշերները ողաներում զրուց անելով»:

Լոռու ձորերը ծածկված եյին խիտ, անանցա-
նելի անտառներով, ճամբաները նեղ եյին ու քար-
քարոտ, իսկ ժայռերի գլխին թռչկոտում եյին այծ-
յամներն ու պախրաները. Առանձնապես հարուստ եր
կուսական անտառներով Դեբեդի ձորը.

Նահապետական Լոռու ընդհանուր պատկերն
ամբողջանում եր պատմական հին ավերակներով. —
«Ես տախտի վրա աղօրում մի վանի,
Են ժայռի գրլիսին նրակում ե մի բերդ,



Մուր աւտարակից, ինչպես զարհուրանք,
Բուի կրոինչն է տարածվում մեր-մեր,
Իսկ քարի գլխից լուռ, մարդու նման,
Նայում է ձօրին մի հին խաչարձան:

Այսպես են նկարագրում Թումանյանն այն ժամանակվա լոռին իր ոկուեցի Սաքոն» պոեմում:

Դերեղի աջ ափից սկսվում եյն անտառները,
Գյուղի ազգիներն ու բանջարանցները, իսկ բարձր
ժայռի գլխին լայն և ընդարձակ հարթավայրի վրա
փռված եր հին նսեղ գյուղը.—

«Մեր գյուղն են ե, վոր նպարս,

Լեռների մեջ միգապատ,

Խոր ձորերի քարափին

Չեռ տրված նտկատին

Միք ե անում շիրաղեմ...»

Դսեղի յերեք կողմում փռված եյն գյուղի արտերն ու արոտատեղիները. հարթավայրը յերեք կողմից կտրտվում եր ձորերով, իսկ հարավային կողմից պաշտպանված եր բլուրներով ու Քոշաքար սարով:

Գյուղն իր գիրքով իսկապես վոր բերդի տպագործյուն եր թողնում: Գյուղից հեռու, այսոր ել հորիզոնի վրա յերեսում են մի շարք լեռներ՝ Լալվար, Քոշաքար, Դըվալ, Զաթինդաղ, Ղարախաչ և ուրիշները. Դերեղի մյուս ափին, գիմացի ձախ հարթավայրի վրա, յերեսում են լոռու գյուղերից մի քանիսը, Զորագյուղ, Ծաթեր, Կուռթան, Ուզունլար (Ոճուն), Այգեհատ և այլն:

Դսեղի մարգերն ու մարգաղետինները լիքն են ին տեսակ-տեսակ անուշանոտ, գույնղգույն ծաղիկներով ու վայրի վարդի թփերով, սարերն ու ձորերը

ծածկված ելին սաղարթավոր ծառերի խիտ անտառներով՝ կաղնի, ընկուզենի, հացենի, լոբենի, վայրի տանձենի, սալորենի և այլն։ Անտառները հարուստ ենին վայրի կենդանիներով ու թռչուններով։ Հովհանումանյանն իր «Քաջերի կյանքից» պատմվածքում տալիս եղաւ այդ անտառների գեղեցիկ նկարագրությունը։

«... Թսեղի հարավային սահմանում — Քոշաքարի ժեռուս կատարին թռչկոտում եղողը*) և բուսնում զանձիլ, իսկ հյուսիսում — Զաղի ձորում՝ ապրում ե կարիճ և հասնում խաղող։ Այս յերկու սահմանների մեջ կան թանձրախիտ, կուսական անտառներ, վոր կացնի ձախն ջեն լսած, ուր ծառերի փշակներում բուն ե դնում մեղուն, թալաններում ապահով վխտում են յերենները, մոռուտներում ինքնիշխան թագավորում ե արջը և շամբուտներում հանգիստ ապրում ե վարագը։ Կան ժայռեր, ուր բուն ե դնում արծիվը և թռչկոտում ե այծյամը...»

Այսքան վայրի ու կուսական եր Լոռին իր բընությամբ, իր կենդանական ու բուսական աշխարհով։

Ահա լեռնային բնության այս շռայլության մեջ ե անցկացրել թումանյանն իր մանկությունը — Լոռու գեղեցիկ բնության դրկում վայելելով լեռնային անմահական ողը, զբնգան աղբյուրների չուրը, լեռնային կյանքի աղատությունը։

Մանկության տարիներն անցել են ուրախ ու զվարթ, վորակես «շողացող առավդու»։

*) Վայրի այծ։

Դաեղ գյուղն այն տարիներին մեծ չի յեղել՝
60—70 տուն ընդամենը. այժմ արդեն մոտ 600—700
տուն եւ:

Հայրական տունը, վորտեղ ծնվել եւ թուման-
յանը, գյուղի սովորական տներից եր—մեկ հարկանի,
կտուրածածկ գլխատուն, կողքին՝ գոմը, տան առաջ՝
սրահը և սալորենու ծառերով փոքրիկ պարտեզը՝
վայրի վարդի թփերով շրջապատված:

Հետագայում իր զբույցների մեջ բանաստեղծն-
այսպես եւ նկարագրում.


«Մի մեծ սենյակ ունեցինք. ոջախը միշտ վա-
սած, յերկու կողմից տախտեր, գոշակներ ու մու-
թաքներ դարսած. բոյահայելին, կողքին սաղը կախած,
մոմակալն ու մաղաղը*), նկարներ...»

Այս տունը հոր կողմի պապի՝ Ուաննեսի կա-
հավորած տունն եր. նա կոռում հայտնի յեղել Ու-
հաննես աղա անունով:

Իր պապին չի տեսել թումանյանը: Մանուկ
Հովհաննեսը իր տատից ու տան մեծերից, հետաքրքիր
զբույցներ ու պատմություններ ելսել, կոռու ձռոան
յերկար գիշերներին՝ իր պապի քաջազործություննե-
րից և խիզախ գործերից:

Թումանյանի պապը ծագումով հին աղնվական
և յեղել և անվանի դինվորական: Հյուրասեր, զրու-
ցասեր մի մարդ եր նա, սրախոս ու դվարճասեր: Նա

*). Մաղաց—ունելիք, վորով կարում ելին վառվող մոմէ
ծայրը:



Տունը, ուր Թումանյանն անց է կազբել իր մանկությունը բարեկամական կապեր եր հաստատել հարեան շրջանների՝ Դազախի ու Բորչալուի թուրքերի և վրացիների հետ և աշխատում եր հաջտ ու խաղաղ պահել այդ ժողովուրդներին:

Մուսաստանից նա իր հետ բերել եր ոռոս ջաղացական: Առաջինը նա յեր, վոր Լոռի մտցրեց մոմի գործածությունը, իր հետ բերելով նաև հայելից նըկարներ և այլն: Մինչև այդ Լոռվա գյուղերում ձեթե ճրադներ են վառելիս յեղել, միայն դրանից հետո յեր, վոր սկսվել է մոմի գործածությունը:

Իր պապի հայրը՝ Ովագիմ Յուղբաշին լեղել և քաջ ու հաղթանգամ, անվանի իգիթ, 18-րդ դարում շնորհիվ իր քաջագործությունների, նա մեծ հոչակ և սուանում:

Նրա մասին պատմում և Խաչատուք Արովյանն
իր «Վերք Հայաստանի» վեպում.

«Մենակ Դսեղեցի Մեհրաբյան Թումանյան Հո-
վակիմի անունը՝ քարերը սասանացնում եր: Մարե-
րի, ձորերի միջում մեծացած, զազանի ու հարամու-
արինը թափելով եր նրա վոսկորները հաստացել:
Յերկու տղամարդ նրա մեջքը չեյին կարող խտրտել,
հինգ մարդ նրա ձեռք չեյին կարող վոլորել, նրա գլու-
խը մեկ որ չեր ցավացել: Կերածը մեղք ու կարաք եր,
հաքածը՝ շալ, կոխածը՝ ծաղիկ ու չիման աղբրների
վրա, մեշի միջումն եր նա որորոցումը աչքը բաց ա-
րել: Նրան Բնաշ կդիմանար: Աժդահա ու վոչ տղա-
մարդ... Ութ ախակեր ուներ, մեկը քանց մեկը աժդահա:

... Վաթսուն ջանից ավելի հոգի՝ հարս, փեսա,
թոռը, ծուռը, առավոտը նրանց տանից դուրս եյին
գալիս, բիգունը մթանը, նրանց ոճորքի տակ քնում
ու նրանց հարյուր տարեկան հերը դեռ յերեկվան
յերեխի պես՝ ըեղերն վոլորում, միրուքը սանդրում,
փափախը կոտրում, նրանց հետ՝ պար գալի, խաղա-
լիս՝ խաղում, սազ ածելիս՝ շատ անգամ ինքը սազը
ձեռներից խլում, ածում, խաղում, քսան տարեկանի
պես ծիու վրա նստում, ասպարը գցում ու սարե-
րում, ձորերում, չաղրի տակին՝ պարզիկա զիշերը՝
վորդոցն իրան արած քաջությունները, Լոռեցունց
տղամարդությունը, հին-հին բաներից, Լազգուց,
Թուրքից, հազար բաներ պատմում...»: Այդ տոհմի
պապերն արտաքին հարձակումների ժամանակ և ինք-
նապաշտպանության որերին, ինչպես Հասան խանի
ասպատակության ժամանակ, գործի գլուխ են անցել

ու պաշտպանել գյուղերի խաղաղ բնակչությունը կոռ-
տորածից ու կողոպուտից:

Իսկ Մհերաբին՝ Ավագիմի հորը՝ գյուղական մե-
ծերի պատմածների համաձայն այսպես և նկարագը-
քում Թումանյանն իր «Բաջերի կյանքից» պատմը՝
վածքում:

«Ծերունի Մհերաբը, Հովագիմի հայրը, Լոռու
ձորերի նահապետը, իսկի չեր ել մտածում, թե հա-
րյուր տարին անց եր կացրել: Նրա վիթխարի, բար-
ձըր հասակը կորացել եր, նորից ամրացել, ճերմակ
մազ ու միրուքը բռնել կուրծք ու յերես, և աժդա-
հայի ահավորության հետ խառնվել, միացրել ծերու-
թյան պատկառանքը»:

Թումանյանի մոր կողմի պապերը սարեցիներ
ելին, գյուղի առաջին հովիթները, տունն ել այդ
պատճառով կոչվում եր «սարըցու տուն»:

Այդ տան նահապետը, տավարած «Ոհաննես ա-
պին», սարերում աչք բաց արած, սարերում մեծա-
ցած, իր հետ բերում և սարերի կյանքը, շվին, բա-
յաթին, ինքն առողջ և յեղել ուժեղ ու, ճենով, մի
աժդանա մարդ: Իր ամրողջ կյանքը նա սարերում եր
անցկացրել և յերբեք կյանքում չեր հիվանդացել:
Ոհաննես ապին իր առաջին վշտից՝ կնոջ մահից,
կաթվածահար և լինում և 108 տարեկան հասակում
մեռնելիս ցալով առում ե. «Այ փուչ աշխարհ, ար-
ժեր յերկու որդի համար ծնվելը...»

Ահա այս յերկու միանգամայն տարբեր ոջախնե-
րի ծնունդ եր Թումանյանը:

Իր տնտեսությամբ հոր տունը միջակ տներից եւ յեղել, ունեցել են յերկու կով, մի գոմեշ և մի քառի վոչխար:

Հայրը, Տեր-Թադեվոսը, գյուղի քահանաներից մեկն եր, նրա աշխարհական անունն եր Ասլան: Սկզբում 1872—1873 թվերին, ուսանում եր Սանահնի վանքում: Քահանա յեւ դառնում, յերը Թումանյանը 4—5 տարեկան յերեխա յեր արդեն:

Մանկության շրջանի դեմքերից ամենաուժեղ և խոր տպավորություն եւ թողել Թումանյանի վրա իր հայրը:

Շատ եր սիրում նա իր հորը, յերը խոսք եր բացվում մեծ մարդկանց մասին, Թումանյանն ասում եր. «մեծ մարդու մասին գաղափար եմ կազմել իմ հորով»:

«Մեծ մարդ եր,—շարունակում եր նա իր զրուցը, —զարմանալի խորը մարդ. անդունդի խորություն ուներ. լայն հոգի. շատ մեղմ. ժպիտը միշտ դեմքին: Յերբեք իրեն նյութական պակասությունից չեր խոսա, չեր ցույց տա. իրեն միշտ հարուստ եր ձևացնում»:

«Ամենալավ ու ամենամեծ բանը, վոր յես ունեցել եմ իմ կյանքում—այդ յեղել եւ իմ հայրը», ասում եւ իր ինքնակենսագրության մեջ: «Նա աղնիվ մարդ եր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով: Զափազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն միշտ ուներ մի խոր լրջություն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ եր ու ձի նլոտող: Այդ ժառանգական եր մեր ցեղի մեջ»:

Հայրը բարձրահասակ եր, նիհար, ժպտուն ու



Հովհաննես Թումանյանի հարը՝ Տեր-Թաղեռոս
(1839—1898)
1896 թ. լուսանկարից

խոր աչքերով, մազերը գանգուր ելին ու շատ վաղ
Տերմակած:

Թու քահանա, բայց, ինչպես պատմում են նրան
մոտիկ ճանաչողները, չի սիրել յիկեղեցին ու լեզ-

զեցական ծեսերը։ Յեվ հաճախ, յիկեղեցու դանդերը
լսելիս, գնում եր զյուղամեջ զրուցի, կամ մարդ
հավաքում բերում տուն զրուցելու, հետն ել իր
չոնքուրն ածում ու յերգ ասում։ Գյուղացիներից
մեկը պատմում եր, թե յերբ զրուցի կամ յերգի
ժամանակ Տեր-Թագեսը լսում եր յեկեղեցու դանգերից
ձայնը, ասում եր. «Ելի հն անտերի ձենը վեր
ելավ...»

Պատմում են, վոր Տեր-Թագեսի հյուրերից մեկը
անմեղ տեսնելով պատից կախված չոնքուրը, հարցնում
են «Տերտեր, դու չոնքուր ածել ել գիտես։ Տերտերը
թե՝ «Եղ հու ավետարանը չե՞ն, վոր գիդենամ վոչ։»

Իինելով առակասեր ու յերգասեր, բնավորու-
թյամբ ուրախ ու դվարթ մարդ, նա կարողանում եր
իր շուրջը հավաքել շրջանի աշուղներին, շվի ածող-
ներին, լավ առակախոսներին ու այսպիսով իր տունը
դարձնել յերգի, քեֆի ու զրուցի կենտրոն։

«Իմ հերը շատ եր սիրում յերգել, — ասում եր
Թումանյանն իր հոր մատին, — մեկմեկ ել ինքն եր
յերգեր հորինում. չոնքուր ուներ, յերգում եր ու ա-
ծում իրիկունները։»

Յերգում եր ավելի թախծոտ, զուտ արենլան
բայաթիներ, կամ աշուղական խաղեր։ Հոր յերդի ու
նվագի իրիկունները Հովհաննեսի ամենաթանգ ու
սիրելի իրիկուններն են յեղել։ Նրա վշտոտ բայա-
թիներն ուժեղ ու խորը տպավորություն են թողել
նրա վրա։ Ասում են, յերբ հայրը սաղ եր նվագում,
փոքրիկ Հովհաննեսը նստում եր շատ մոտ, նայում
եր նրա դեմքին և մեծ ուշադրությամբ լսում։

Հայրը բարի, միենույն ժամանակ անփոյթ ու

շուալլ ապրող մարդ եր: Հաճախ եր պատահում, վոր գյուղերում աշխատածը թողնում եր դուքսը, չունեոք ներին տալիս և ինքը զատարկ տուն գալիս: Շատ անդամ ստացածը զրապահն եր ածում առանց նայելու, ուղղողին ել տալիս եր առանց հաշվելու, ասելով՝ «Ենքան ըլլի, վոր կնիկս իմանա վոչ»:

«Ի՞նը չկարողանալով տանել իր ամուսնու անհոգ ու շուայլ բնավորությունը՝ մշտական վեճի մեջ եր հետեւ»

«Այդ եր պատճառը,—գրում ե թումանյանը— վոր հայրս յերբեմն թագուն եր տեսնում իր գործը: Շատ ե պատահել, վոր մայրս դուրս ե գնացել թե չե, ինձ կանգնացրել ե դունը, վոր հսկեմ, ինքը ցորենը լցրել տփել մի վորեւ պակասավոր գյուղացու կամ սարից իջած թուրքի շալակը»:

Թումանյանի մալրը իր ամուսնու բարեսրտության մասին հետեւյալ հետաքրքրական դեպքն ե պատմում:

«Մի տարի սով եր. տերտերը աղունը ջաղացը տարավ, վոր աղա. յես ել փուռը վառել եմ, ճամփայեմ պահում տերտերի գալուն: Մթնել ա: Յերեխերը լաց են լինում, սոված են. տանն ել հաց չկատ Մին ել տեսնեմ, տերտերը գալիս ա դատարկ, յերկու կըրկենի (բաղած) կուն տակին:

Դու մի ասիլ, մի ձիաբեր ալյուրը կրկենի աթխել, դուրս յեկել հանդը, գեղի հանդի սոված մշակին փայ արել ինքը դատարկ յեկել տուն»:

Շատ ե պատահել, վոր դաշտում հանդիպած չունեվոր հնձվորին մերկ տեսնելով՝ իր հադի շապիկը տփել ե նրան. կամ թե աշնանը դուղի չքայորի

կամ այրու չհնձած արտը հնձել ե տվել իր վարձած
մշակներին:

Լինելով զվարթ ու կենսուրախ մարդ, շատ ե
սիրել յերեխաների շրջանը. նրանց հետ կոճի յե խա-
ղացել, իսկ գյուղի աղջիկների հետ յերգել համբարձ-
ման առնին վիճակ հանելիս:

Յորդով, մըգով ու կատակներով եր պահում իր
յերեխաներին. Առանձնապես սիրում եր իր մեծ տը-
ղալին՝ Ռաննեսին. հոր ու վորդու փոխազարձ ալղ
սերը տարիների ընթացքում ավելի ու ավելի ուժե-
ղացել եր ու խորացել:

Պատմում են. թե յերբ 1890 թվին լույս ե տես-
նում Թումանյանի բանաստեղծությունների առաջին
գիրքը, հայրը գյուղում մեծ հրճվանքով կարդում եր
և ասում—«Հիմի ինձ ել մահ չկա...»

Հայրը գյուղի աչքի ընկնող հասարակական գոր-
ծիչներից ե յեղել: Հարեան շրջանի թուրք գյուղերի
հետ բարեկամական լավ կապիր ուներ: Տունը միշտ
լիքն եր հայ և թուրք հյուրերով, և գրա համար տան
հարսներն ու աղջիկները հանգիստ չեն ունեցել հյու-
ըներից:

«Զափի չկար մեր տան դոնախին—շատը թուրք
եր»,—պատմում եր Թումանյանի մայրը:

Առաջին լամպը հայրն եր բերել Դսեղ գլու զը,
վոր գնել եր Ստեփանավանում հինգ ոռուրլով Ամրողջ
գյուղը զալիս եր և զարմացած նայում վառվող լույ-
սին. Մայրը պատմում է, վոր այն ժամանակ լամպի
մասին ասում էին, թե Ռուսաստանում մի զադ ա-
զուրս յեկել, շուշի միջին ինքն իրեն երում ա ու
լիս ա տալիս:

Այդ լեզել և մոտավորապես 1872—73 թ. թ.: Այդ տարիներին և գյուղում դորձածության մեջ մը-տել նաև կաղամբը և ապա կարտոֆիլը:

ՄԱՅՐԸ

Թումանյանի մայրը, Սոնան, միանգամայն հա-կառակ բնավորության տեր եր, նույն գյուղիցն եր. սարերում մեծացած ու ապրած, իր հոր նման՝ առողջ, ուժեղ ու զիմացկուն: Բարձրահասակ եր, գեղեցիկ և կարմրաթուշ, կատարյալ սարի աղջիկ, ինչպես գյու-ղացիներն եյին ասում՝ մի «գիծ պախրի կով», Աշխա-տասեր, մեծ կամքի տեր, գյուղի արի և անվախ շա-նանցից եր. նա լե կառավարել տունն ու սարը:

Մինչեւ վերջին տարիներս եւ, թեև 80 տարին անց եր կացրել արդեն, նա լեր սարը գնում, նա լեր սարերում մենակ անասունները պահում և ձմեռվա կաթնամթերքը պատրաստում:

Մայրը անգրագետ եր: Մի անգամ, լեռեխանե-րից մեկի հարցին, թե՝ «նանի, դու ուսումնարան գնացել ես,—պատասխանեց. «ըա, գնացել եմ. վոնց չե... տասներկու ուսումնարան եմ ավատել...» ու սկսեց թվել այն բոլոր սարերը, ուր ամառները սար և գնացել Ղարանլուղդարաք. Կարմիր եր (ալո) կալե-րի սեռ, Քոշաքար, Շալու ՚Իուզ, Շաղկոտ Ուոթ, Սոթ և այլն...

Լինելով հաշվով ապրող ու տան հոգսերով ծան-րաբեռնված, Թումանյանի մայրը տանը շարունակ խոսում եր, կովում—առավոտը վաղ վեր կենալու,



Հային, Թումանյանի մայրը՝ Սոնան.
(1933 թվի լուսանկարեց)

աշխատանքի գնալու և խնայողությամբ ապրելու համար:

Առավոտից իրիկուն տանը զալմաղալ եր ու կոխվ: Հենց վոր նանը խոսում եր, տերտերն ասում եր. «Յերբ պիտի գարունքանա, վոր սրան սարը զարգենք, մենք հանգիստ ապրենք»: Նույնն եր ասում նաև Թումանյանի յեղբայրներից մեկը. «Յերբ նանը սարումն եր լինում, մեր տանը հարսանիք եր. ականջներս դինջ, մրգներս բոլ»:

Մայրը տարվա մեծ մասը սարերումն անցկացնելով, իր յերեխաներին ել սարերումն եր պահում, մեծացնում: Սարն եր գնում վաղ գարունքին ու մընում եր մինչև ուշ աշուն: Ինչպես ինքն եր պատմում. «Սարումը կենում եյինք, մինչև ձնի կաթոցը, են ա ձնի հետ կոլոլվելով գալիս եյինք գեղը. ամպը գոռում ա, չոքում, սկակնում...»: «Հենց վոր գարունքանում եր,—շարունակում եր պատմել մայրը,— են ա սարն եյի տանում յերեխանցը, տանելուս ել ապրանքը ձիուն եյի բեռնում, երեխանցը շալակս առնում, ապրանքի յեղնա վոտով գնում, ինչ ա ձիու զրա երեխեն չհարվի: Սարերումն ել են ծաղկոտ տեղերումն եմ պահել աղբըների կշտին կացելք»:

Մարը գտնվում եր Քոշաքար լեռան ստորոտին, գյուղից 18—20 կիլոմետր հեռավորության վրա և կոչվում եր Ղարանղղարա՝ Մթին Ձորք

Հետագայում Թումանյանն ասում եր. «Ինչ վոր սարի բան կա իմ մեջ՝ զա նանիցն եւ Թոչող կին եր իմ մերը. արծվի թոփչք ուներ: Ամենաբարձր սարե-

բում, ծաղկոտ տեղերումն և պահել ինձ: Շատ բան ե տվել ինձ մայրս, շատ եր սիրում ինձ, շատ:

Շատ աշխատասեր կին եր թումանյանի մայրը՝
բացի սարի ու դաշտի աշխատանքն ու տան հոգսը, նա
տան մանվածքն ու դործվածքն ել եր անում: «Յե-
րեկո ապրանքն եյի պահում, դուլպեն ձեռիցս զեր
չգցելով, գիշերը թել մանում՝ չուխա, խալի դործում»,
—պատմում եր նա:

Իր ճախարակի առաջ նստած, գիշերները թել
եր մանում, հետն ել յերգ ասում: Իր ութ յերեխա-
յին այդպես ե պահել, մեծացրել: Յերգել ե ավելի
տխուր յերգեր՝ արեելյան յեղանակներ, ժամանակ-ի
տարածված յերգերից մի քանիսը - «Ե՞ր հեռանաս»,
«Մանիր, մանիր իմ ճախարակ», «Աղնիվ ընկեր» և
այլն:

Լինելով զրույց սիրող ու լավ պատմող կին, նա
իր յերեխաներին հին-հին զրույցներ եր ասում՝ ի-
րենց տան մեծերի կյանքից, լեզենդներ ու հեքյաթ-
ներ պատմում առակների հետ միասին: Պատմում
եր Հասան խանի որերից, թե ինչպես լոռվա գլուղե-
րի ազգաբնակությունն ալդ ժամանակները գլուղերից
փախած, ահ ու սարսափի մեջ այրերումն ե ապրել.
պատմում եր Ոհաննես աղից, նրա յեղբայրներից,
զյուղի անցած շրջաններից, իր ջահել որերից:

«Յես վոր հարս յեկա, մեր տանը 60 մարդ կար-
ոխաը ախպեր եյին, ոխտն ել սիպտակ միրուքավոր...
ամենքի աղաքին ել դուլուղ անեյի», —այսպես եր հի-
շում նա իր հարսնության որերը:

ԱՆՀՈԳ ՅԵԶՈՒՄՐԱԾԸ

Թումանյանը տան ամենամեծ յերեխան եր և առենից սիրվածը։ Տանը՝ իր հարազատների սիրառատ շրջանում ամենքից սեր ու գգվանք ե վայելել սիրո պայծառ մթնոլորտում մեծացել դուրսը՝ իր խաղնկերների յերգերով, խաղերով ազատ ու անհոգ ապրել։

Մալքն ասում եր. փորբուց շատ եյինք սիրում Ոհաննեսին, շատ. Գիշեր ցերեկ ձեռներիս ենք պահել յես ու իմ սկեսութը։ Որորոց չենք դրել, վոչ ել ճոճ, ինչ ա միտքը թարազ (պայծառ) մնա, չունքի (վորովհետեւ) որորոցումը միտքը կտրորվի. կշաղվի։ Լավ եյինք պահում, համա շատ եր լաց լինում. Իրիկնադեմից մինչև լիսը են ա նվում եր, լաց ըլում։ Լալկան ե յեղել Հովհաննեսը նաև յերեք-չորս տարեկան հասակում։ Տատը թոռան համար բարձի տակին կակալ, շամիչ եր պահում, տալիս եր իրան, վոր լաց չլինի, հերը ծեծի վոչ, համա ճար չեր ըլում, ենա լաց եր լինում...»

Թումանյանին շատ ելին սիրում տատերը—ավելի՝ հոր կողմի տատը—Ոհաննես աղի կինը։ Այդ տատը չեր սիրում գյուղի կյանքն ու գյուղի ու աշխատանքը։ Այնքան անծանոթ եր գյուղական կյանքին վոր յեղանը միշտ «չոշ» եր ասում, նա սիրում եր առվելի քաղաքը և քաղաքի կյանքը. լինելով ավելի քաղաքակրթված կուլտուրական կին, քան թե գյուղի մյուս կանայք, նա յեր հետեւում թռռան կրթութեանը, նրա հագնվելուն, շարժ ու ձերն, պահանջելով վոր ամեն ինչ լինի մաքուր, կիրթ ու ճաշակով։

Թոռանը շատ սիրելուց նրա անունը գրել եր իր
ամուսնու անունը – Ոհաննես:

Թումանյանին պակաս չափով չի սիրել և մյուս
տատը՝ մոր մայրը, վորի տունն ապաստան եր ծանր
աշխատանքից ու ծեծերից փախչող մանուկ Հովհան-
նեսի համար:

Իր մանկությունը հիշելիս Թումանյանն ասում
եր՝ յերկու տատիս ծոցումն եմ մեծացել:

Տատի տունը գտնվում եր գյուղի մյուս ծայրին։
Տատը թխվածքներ եր թխում, սարի ադդագ (սերուց-
կից պատրաստված թխվածք) ու սեր ուտեցնում
թոռանը, միրդ տալիս, սիրում, գուրզուրում։ Ամառ-
ները իրեն հետ սարն եր տանում։

Հովհաննեսը վորքը հասակից թեև նիհար, բայց
շատ առողջ, ժիր, աշխույժ ու չարաճճի լերեխա էեր։
Կարմիր արխալուղը հագին, մորթե փափախը գլխին,
վոտքին տրեխներ, ճիպոտը ձեռին—իր հասակակից-
ների հետ շարունակ ձորերում, հանդերում՝ թափա-
ռում եր, խաղում, վազվզում։

Հինգվեց տարեկան հասակում յեղնարած եր,
բայց յեղները միշտ կորցնում եր։ Նա շատ եր սի-
րում անասուններին արոտ տանելը, Անասուններին
տանում եր հանդը բաց թողնում, ինքը հեռանում
մի քարի զլխի նստում կամ ծառի տակ պառկում և
անձնատուր լինում իր ցնորքներին։ Ժամերով նա-
յում եր վերջալույսի վարդագույն ամպերին, լուսմ
թոշունների ծլվլոցը կամ թե չե պառկում եր ձորա-
փին և լուսմ Դեբեղի վշշոցն ու յերազում... Նա ա-
մեն ինչ մոռանում եր, մնում եր իր մտքերի հետ,



Հին Դահլը

իսկ անասունները արածելով հեռանում ելին իրենց հսկողից ու կորչում...

Շատ ուշ միայն, յերբ մութն ընկնում եր, ըսթափվում եր իր յերազներից, հիշում եր յեղներին և գատարկ վազում առնու: Տանը ջովհաննեսին խիստ հանդիմանում ելին ալդ բանի համար, հաճախ նույնիսկ ծեծում:

Մայրը պատմում եր. «Ամեն որ տեսնում եյի թըդի ուսին մինը կանգնած, ապրանքն ել հեռու շաղ ընկած, հետո եյի իմանում, վոր եդ Ոհաննեսն այնել ապրանքը բաց թողած»:

Թեև վատ յեղնարած եր, բայց շատ եր սիրում

յեղները, կենդանիները, առհասարակ վողջ կենդանական աշխարհը:

Իր կենսագրական նյութերի մեջ հետագայում թումանյանը սիրով և հիշում իրենց և պապոնց կենդանիներին.

«Իբրև հին կարոտ մտերիմների հիշում եմ պողատ գոմեցը Նազլուն, Ծաղիկը (կովի անուն) Զերքեղը, Արրաջը (յեղներ), Թորլան շունը, Ղայթարը (շուն) իմ պապոնց, մեր Մարինոս եղը, Ղայթ ձին, մեր սե Մաշկոն (շուն), վոր պապս հետը բերել եր Ռուսաստանից: Իսկ հետագայում, յերբ գլում եր կենդանիների կյանքից իր հայտնի պատմվածքները նա մի առանձին ջերմությամբ ու սիրով և խոսում կենդանիների մասին՝ յեղնիկի, ծիծեռնակի, շան և այլն, համեմատելով նրանց մարդու հետ.

«... Ի՞նչ ա մեր ու են սարի պախրի զանազանությունը—գոչին,... ամենի սիրտն ել սիրտ ա, ամենի ցանքն ել ցավ...»

Իր հասակակիցներից մեկը՝ Գարոս բիձեն, վոր հիմա գյուղի կուեկտիվի խողարածն ե, պատմում ե իրենց մանկությունից. «Հինգ-վեց տարեկան երեխեք եյինք. անքան երեխեք. ենա հանդն եյինք զբանում խաղ անում. Ռհաննեսն ել հանդը շատ եր սիրում, տանից փախած սաղ որը ման եյինք գուլիս:

Գնում եյինք Դըդի ուսը, ապրանքը հետ եյինք ածում, թոցնում, ընդիան սեղի մեկել ծերն եյինք վազում՝ կաթնաղբյուրն ու Սովիակը. աղբը դըրբի դըրբա-

զին հաց ելինք ուտում, յա թե չե Շովեր*) ելինք
պնում մոռ, մոշ ուտելու ծափ բուն ման գալու, ձու
հավաքելու»:

Չատ ենք խաղացել ս. Գրիգորի աղբրի կշտին:
Գնում ելինք վանքը, ընդիան Զաղի ձորը—Դեբեդում
լողանում, խաղում, ձուկ բոնում»:

ԽԱՂԵՐԻ ՅԵՎ ՀԵՖՅԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Իր մանկության վայրերից Թումանյանն ամենից շատ Դիզն եր սիրում ու հիշում:

Դիզը գյուղի հուսիս արևելյան կողմում, հարթավայրի կենտրոնում, քարոտ կատարով մի բլուր է: Հնում, հարձակումների ժամանակ, դիտարան ելեղել, հետո ուխտատեղի յե գարձել, իսկ այժմ յիկվորների համար զբոսավայր ե: Այդ բլուրի չորս կողմը տարածվում են գյուղի արտերը: Դըզի կատարից յերեսուն ե գյուղը՝ իր շրջակայքով ու սահմաններով: Դըզի վրա միշտ հով ե, ողը դուրեկան ե բուրումնալի: Այստեղ ուոց և անանուխ ե բունում, իսկ ստորոտին՝ բազմազան ու բուրավետ ծաղիկներ:

Առաջ, Թումանյանի մանկության տարիներին, Դըզի ստորոտին ծառեր ու աղբյուրներ են յեղել, վորոնք հիմա չկան:

Շնորհիվ իր թափառումների, Թումանյանը ման-

*) Շովեր—փռքրիկ լիճ ե, անտառի մեջ. գտնվում ե գյուղից մոտ յերկու կիլոմետր հեռավորության վրա. Կոչվում ե նաև Տըզըրուկա-գոք վորովհետեւ լիքն ե տպրուկով: Զորս կողմք յեղեգնութ ե:

կուց արդեն լավ գիտեր գյուղի, նրա սարելի, պատմական հուշարձաններով հարուստ շրջակա վայրերի անոնները, մութ ծմակներն ու թալաները:

Նա գիտեր բուսական աշխարհը վայրի բույսերի, բանջարեղենների զանազան տեսակները, ծաղիկների անունները, ինչպես՝ շուշան, կոճղեզ, ճանդուկ, պուտ, յերիցուկ, ուռց, անանուխ և այլն:

Մանուկ Հովհաննեսի մեջ սերը դեպի բնությունը, դեպի խաղերն ու թափառութերն ավելի յեցեղել, քան թե սերը դեպի կալի ու հանդի աշխատանքը, վորից միշտ խուսափել ե ու փախել:

Ամանները հայրը Հովհաննեսին հաճախ տանում եր հանդը՝ սայլի աշխատանքի Հովհաննեսը ցորենի խուրձը հորը տալիս եր նրա գլխի վրայով, և այնպիս եր զցում, վոր խուրձը սայլի մյուս կողմն եր ընկնում, և սայլի վրա կանգնած, խրձին սպասող հոր յեղանը մնում եր դատարկ, այս վոր մին յերկու կրկնվում ե, հայրը բարկանում ե նրա վրա ու դուրս անում:

Մի որ ել, հանդից տուն դառնալիս, հայրն ասում ե, «Ո՞ւաննես ջան, դու սելի առաջը կանգնի, յեղները պահի, յես ակներին սապոն քսեմու Հայրը մըտնում ե սայլի տակը: Այդ ժամանակ Ո՞ւաննեսն սկսում ե ճիպոտով յեղներին բղել, սայլը շարժվում ե... հայրը սալի տակից ձայն ե տալիս. «Հն արա, հն արա...» Ո՞ւաննեսը «հն» ե անում, կանգնեցնում, բայց մի քի հետո, նորից ե սկսում բղել, այնքան ե անում, վոր հայրը գործը թողնում ե կիսատ, սայլի տակից դուրս ե գալիս, վրան բարկանում ե ինքը սայլը մենակ քշում:

Դրանից հետո հայրն իր համար մի ոգնական ե վերցնում և Հովհաննեսին ազատում, Հովհաննեսն այս վոր տեսնում ե, ասում ե. «Ես ել հենց եղ եցի ուղում, վոր համ դուք ազատվեք ինձանից, համ յես՝ ձեղանից»:

Այսպես արկածներով ե անցել Հովհաննեսի մանկությունը, չարաձնի ու անհանգիստ ե յեղել նաև քույրերի ու լեզրայրների հետ խաղալիս:

Մի անգամ ամառը, կալի ժամանակ, վորքո յեղբոր հետ տուն են գալիս և ոգտվելով տանեցիների բացակայությունից, վորոշում են փոքր քրոջը կնքել: Մեկը քավոր ե դառնում, մյուսը՝ տերտեր, ու սկսում են խաղալ Փոքր լեզրայրը վերմակը զցում ե իր ուսերին շուրջառի տեղ: Հենց այդ ժամանակ ներս ե գալիս մայրը, վորին տեսնելուն պես՝ յերեխային զցում են ու իրենք փախչում:

Բացի ընկերների հետ զյուղի շրջակաւքում կատարած թափառումներից ու խաղերից, Թուժանյանը սիրում եր նաև խաղաղ զբույցնեողը, հեքյաթները՝ իր ընկերների կամ մեծերի շրջանում: Նա առանձին քաղցրությամբ եր հիշում իր այդ որերը: Իր պատմը վածքներից մեկը՝ «Իմ ընկեր Նեսոն», հենց այդ որերի նկարագրությամբ ե սկսում:

«Մի խումբ ընկեր յերեխաներ ելինք: Գյուղացի լերեխաներ:

Վոչ ուսումնարան կար, վոչ դաս, վոչ դաստիարակություն, աղատ եյինք միանգամայն ու խաղում եյինք. ի՞նչքան եյինք խաղում: Ու վճնոյ ելինք իշրաբ սիրում, վժնց եյինք իրաբ սովորել: Սոված ժա-



Գոեղի ընդհանուր տեսարանը

մանակներս ել՝ վազում ելինք հացի տաշտիցը մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու ել յետ շտապում իրար մոտու իրիկուններն ել հավաքվում ելինք, ծիծաղ բաներ ասում կամ հեքյաթ պատմում:

Մի ընկեր ունելինք, անունը Նեսու Ենքան հեքյաթ գիտեր, Ենքան հեքյաթ գիտեր, զոչ ձեր ուներ, վոչ տուտը:

Ամառվա լուսնյակ գիշերները մեր դռան զերանների վրա շուրջ-բոլոր նստոտում ելինք, հիացած պլրշում Նեսոյի՝ վոգեորությունից գեղեցկացած գեմքին: Ու պատմում եր նա Հուրի Փերիներից, Զմրուխտ դուշից, Լիս ու Մութ աշխարհից...»

Հեքյաթներ շատ եւ լսել մանկության տարինե-

քին. լսել ե, սիրել ու շատերն անդիր արել դեռ
մանկուց:

Իր քեռից երից լեգենդներ ու զրուցներ ե լսել
ինչպես Թումանյանն եր ասում՝ «Արծիվը ու կաղ-
նին», «Անբախտ վաճառականները», «Եռւնն ու կա-
տուն» իր մեծ մորյեղբայրը՝ քեռի իսաւին ե պատ-
մել սարհց գալիս, ճամբին, «Են ժամանակ աշակերտ
եցի գեռես և լավ ել հիշում եմ եղ որը»:

Մանկության որերից ե սիրել նա ժողովրդական
զըստցներն ու հեքյաթները, առակներն ու լեգենդ-
ները. փոքրիկ Հովհաննեսը հետագայում, իերք սկսում
ե գրել, իր գրվածքների համար առատորեն ողավում
եր մանկության որերին գյուղում լսած ժողովրդա-
կան այդ նյութերից:

Թումանյանը մանկուց վոչ միայն սիրում եր
լսել ժողովրդական զրուցները, այլև հետաքրքրում
եր ժողովրդի կյանքով, ապրում նրա ցավերով ու
վշտերով. Նա սիրում եր ժողովրդի կենդանի լեզուն,
վոճերն ու դարձվածքները և հետագայում ինքն ել
գրում եր ժողովրդին հասկանալի, պարզ ու պատկե-
րագոր լեզվով.

Հեքյաթների ու լեգենդների հետ միասին, Թու-
մանյանը սիրում եր և սարի շվին՝ վոչխարի և այլ
չեղանակներ։ Գյուղում՝ հանդերում, իսկ սարերում
դադաների առաջ պառկում՝ եր ու ժամերով լսում
հովիվների սրինգը, նրանց յերգը, նվազն ու բայա-
թին։

Վոչ մայն մանուկ որերին, այլև հետագայում,
իերք ամառները Թիֆլիսից գյուղն եր գնում, միշտ
նվերներ եր տառում շվի ածովների և առակ ասող-

Ների համար։ Կանչում եր նրանց իր տունը, հյուրասիրում, նվերներ տալիս՝ դիրք, թութուն, արխալուղացու, կամ ուղղակի դրամ։

Եփի ածողներից Դսեղում հայտնի եյին՝ հովիզ Ակոփը և Դշի Միխակը։ Առակ ասողներից այն ժամանակ հայտնի յեր Մելքոնանց Ոհաննես ապին։ Մի ծեր չքավոր բոստանչի յեր նա, վոր ամառ ու ձմեռ տպրում եր Զաղի ձորում—ամառները բանջարեղին եր մշակում և դրանով ապրում։

Ահա այդ Ոհաննես ապի դափումն և հաճախ գիշերակաց մնացել, նրա հետ յեղնիկի վորսի գնացել, գիշերները զբույց արել վորսորդների և կենդանիների կյանքից։

ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Խաղերի և հեքյաթների աշխարհից դուրս, նամի ուրիշ ափելի մեծ աշխարհ ուներ, վորին կապիած եր վաղ մանկությունից, վորի գիրկն եր գնում միշտ, վորից շատ բան եւ ստացել ու շատ բան սովորել։

Այդ աշխարհ—ինքը բնութիւնն եր։

Թումանյանը, շատ եր սիրում բնութիւնն ը, Լոռու վայրի բնության բազմերանդ յերեսոյթները, նրա ճոխ տեսարանները, գույները, ձայները...։

Հաճախ ե առանձնացել բնության գրկում, ազատ ապրելու, նրա հետ ձուլվելու, նրանով շնչելու։ Միրել ե թափառել լոռու հանդերում և անտառներում մեն-մենակ իր ցնորքների հետ... կամ սարգերի լոռության մեջ լսել թոշունների ծլվվոցն ու արտերի ուղարկոցը։

Լոռու հանգերը առանձնապես սիրուն ու կենացանի յեն գարնան որերին, յերբ ծաղկի ու կանաչի բացվելու հետ միասին սկսում են յերգել ծղրիդները, ճախրել արծիվները ու արտերի մեջ «արտորել», «կը թացնել» արտուտները...

Իր պատմվածքներից «Ծղրիդում» Թումանյանն այսպես է նկարագրում Լոռու հանդի վաղ գարունը.

«...Լսել եք են թախծալի ճըռոցը վոր ծաղկի բուրմունքի ու կանաչի թարմության հետ խառնված հոսում և գարնան դաշտերի յերեսով։

Իհարկե լսել եք, և ինչքան եք լսել Դեռ ով գիտի, գուցե եղ ժամանակ մի ծառի կամ թփի տակ ել պառկած, խորասուզվել եք ջինջ կապույտ յերկնքի խորության մեջ, մաքուր թեթև յերագների մեջ, իսկ չորս կողմերդ ծավալվում և համատարած ճըռ՝ ... ճըռ՝ ... Հանդի կամ դաշտի ծղրիդն և իր անթիվ ու անհամար ընկերներով։

Կամ գուցե հիշում եք են մելամաղձոս ճըռոցը, վոր ամառվան իրիկունները մենակ ու միալար հընչում և զյուղական խաղաղ տան մի վորսե անկյունից։

Յեզ ինչ զյուրեկան թախիծ ե ըերում մարդու հոգուն, ինչ խաղաղություն, ու մանկության որերից մանկության իրիկուններից, նրանից ել կարծես թե դինը՝ հեռավոր ու անվորոշ հիշողություններ։

Ինքն ե այստեղ, այս հատվածում, Թումանյանն՝ իր մանկության որերում, ընության գրկում, մանկության հիշողությունների քաղցրության հետ միաբն։

Լոռու հանդերն ու արտերը, ուր անց ե կացրել իր մանկության որերը Թումանյանը, դանվում

են Դիդ մեծ բլուրի շուրջը. թերեւս դրա հաճար եւ ամենից շատ ՚իդէն եր սիրում նա:

Ամառները, յերբ Թիֆլիսից գյուղն եր գնում, հաճախ եր բարձրանում ՚իդը զբունելու. պառկում եր նրա փեշերին ու նայում մոտակա արտերին, հեռումոր անտառապատ սարերին ու մտքով գնում՝ կոռում անցկացրած իր մանուկ որերին, մանուկ որերի չարություններին ու խաղերին:

«Հեյ գիդի հա... Բնչ որեր եմ անցկացրել փոքր ժամանակս եստեղ. Երեխեքս հավաքվում ելինք ՚ըդի դոշը—ուսց եցինք քաղում, հասկերից պկու*) շինում, մեջքներթա վրա պառկում եցինք ու ածում... Բնչ լավ եր...

... Ես միջակներումն Բնչքան մորի յեմ հավաքել, ծմակներումն կխտարի վորս արել...


Են Բնչ բան եր... մարդ վոր հիշում ա... Շատ եցի խաղում, վազվզում. համա չար եցի, հա... Բնչ ոյին ասես չեցի սարքում... ե... ե...»

1923 թվի մարտին, Մոսկվայում, իր կյանքի վերջին որերին, նորից մեծ կարոտով հիշում եր ՚իդը.

«Շատ եցի ուղում, վոր ՚ըդի ուսին լինեմ. ենտեղ եմ անցկացրել յերեխա ժամանակիս լավ որերը... շատ եմ խաղացել ենտեղ, շատ...

Մանուկ Թումանյանի վրա ավելի ուժեղ ու խորը տպավորություն ե արել ՚իերեդ գետը իր ձորով և իր վշտով: ՚իերեդի ձորն ու նրա վշտը հաճախ ե

*) Պկու—սրնգի նման նվագածության գործիք և հասկեցողունից կամ յեղեգնից պատրաստած:



Ծովերը

պատահում ու բացվում Թումանյանի պոեմներում,
պատմվածքներում:

Իր կենսագրական նյութերի մեջ Թումանյանը
դրում եւ.

«Իմ մեծ ուսուցիչն ե յեղել Դեբեղի վըշտը՝
գիշերները լուսիյան մեջ միշտ ականջ և յի դնում
Դեբեղի ձենին, յերբեմն՝ խուլ ու խոր, յերբեմն պարզ
ու ահավար:

Ցեվ կարծես խոսում եր հոգուս հետօ:

Դեբեղի վըշտը գյուղում գիշերներն ավելի
լավ ե լագում, ավելի տպավորիչ ե ու լարերգավոր.
իսկ ցերեկները գետը յերեւում ե գյուղի ձորափի
ժայռերի գլխից, վորանեղից ամբողջ ձորն ե բացվում՝
խոր, լայնաբերան, իսկ ձորի միջից ոձագառյուտ հո-
սող կա . աղի՝ Դեբեղին զուգահեռ անցնում ե յերկա-
թուղագիծը

Թումանյանը շատ ե սիրել Դեբեղի ձորը: Այդ
ձորը գյուղի ամենամոտ ձորն ե, գտնվում ե հենց
Դսեղ գյուղի տակը՝ կոչվում եր «Տան տակի ձոր»:

Այդ այն ձորն է, վորի նկարագրությունով և
սկսում Թումանյանն իր «Լոռեցի Սաքոն» պոեմը.

«Են Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունի նորերը կիտած՝
‘Են ու դեմ կանգնած, համառ ու անբարք
Հայացքով իրար նայում են հանդար:

Նորանց վոտերում՝ գազազած գալի՝
Դալարվում է գիծ Դեբեղը մոլի,
Խելազար թրչում ժարերի զրիսով,
Փրփուր է բեռմ անզուսպ յերախով,
Թրփում ու զարկում ժեռու ափերին,
Փրեւում է ծաղկած ափերը նին-հին,
Ու զուռում զիժ-զիժ.

—Վա՛ Շ-վի՛ օ՛, վա՛ Շ-վի՛ օ՛...»

Դեբեղի այդ ձորն այն ժամանակ առանձնա-
պես հարուստ է յեղել հաստարուն, գարավոր կաղ-
նիներով, ընկուղենիներով, ոլտղատու այլ ծառերով
ու խաղողի այգիներով:

Դեբեղը այդ ձորի միջով անցնում է մերթ
քարքարոտ տեղերով՝ սրբնթաց ու գիֆ, թոշում և
քսրերի գլխով, սելավաջրի նման պղտորվում, մերթ՝
թեկը փռելով հոսում է մեղմ ու հանգիստ:

Դեբեղի գլխավոր ճյուղերը յերկուսն են՝ մեկը
Փամբակա լեռներից բղխելով Փամբակա ձորով և
հոսում, մյուսը Բերդուջը գալիս է Մըթին (Ղարա-
խաչի) սարերից՝ Ստեփանավանի ձորով: Այդ յերկու
վտակները Թոլագերան կայարանից ներքե, Լո-
ռու ձորում միանում են և կաղմում են Դեբեղը:



Գրքի ձևակերպություն



Այդ ձորումն և յեղել Թումանյանի պապերի ընկուզենու հին այգին ու ջաղացը, Յերբ 1898 թվականին կառուցվում և թիֆլիս—Կարս յերկաթուղագիծը, Դեբեգի ձորի հարուստ անտառն ու այգին վոչնչանում են:

Թումանյանի գրվածքներից մեկում, «Քաջերի կյանքից» պատմվածքում, մեր առաջ պատկերանում և այդ հին ընկուզենու այգին և պապերի քեֆը:

«Չորտդետի ափերին՝ բոլոր ծառերից բարձր մի խումբ ընկուզենիներ են բարձրանում. ծուխը բարձրանում և նրանց միջից վերև, և քաջերի խումբն աղմկալի ուրախանում—քեֆ և անուժ այն հսկայական հովանու տակ:»

Ծառատակերին, կանաչ խոտերում կարմիր խալիչաներ տարածել, մի մեծ շրջան են կազմել անխնա լցրած մավի սուփրաների շուրջը: Ալեոր Մեհրաբն եր իր հարազատներով, Ովագիմն ու իր խումբը, Պղասին և իր ընկերները... և զանազան տեղերից պատսպարված ժողովուրդների մեծերն ու տանուտերերը: Ռւրախությունից բացվել, ծիծագում են նրանց խոժոռ դեմքերը, ինչպես առավոտյան արևի տակ այն ու ժայռերը»:

Այդ այգում յեղած քեֆերից մեկի պատկերը Թումանյանը տվել է իր «Հին որհնություն» ըստ նաստեղծության մեջ.

Կանաչ, վիրխարի լնկուզենու տակ,
իրենց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի ըջան կազմած,
Բեֆ ելին տնում

Ցեվ ուրախանում

Մեր հրսկա պապերն ու մեր հայրեր՝

Դյուդի տերեր...

Դեբեղի ձորումն եր գտնվում վճիռ ու սառն
ազբյուրներից մեկը, վորտեղ Հովհաննեսը իր խա-
ղընկերների հետ ամառը լողանում եր:

«Մարո» պոհմում տեսնում ենք այդ որերի հու-
շերը.

«Են տովակում կեսորին,

Յերբ վոր ռոգից նեղանում,

Գնում է ինչ լողանում:

Տրիոր, աշխայծ, խըմբերով,

Սղողակով, աղմուկով

Խաղում ելինք, վազվում

Գուշն-զուն մանրիկ ավագում:

Կամ նետեվում հեվ ի հեվ

Թիթեռնիկին վասկերեւլ...»

Յերեխա ժամանակ շատ ե խաղացել Դեբեղի ա-
փին, իր ընկերների հետ քար զցել ձուկ բռնել,
լողացել Պատահել ե, վոր գիշերներ և անցկացրել
ձորում գյուղացիների շրջանում՝ զբույցներով ու
առակներով: Ավելի ուշ, աշակերտական տարիների,
այդ գիշերների մասին ինքը հիշում եր ու պատ-
մում.

«... Աշակերտ վախտու եր. Ղոխնանց պապը մեր
ձորումը գիշերները կրակի ղրաղին չիրուխ եր սար-
քում, հեքյաթներ ասում...

Դեբեղը վըշշում եր... ձորերը թըշշում, ձեն
տալիս... պախրին գոռում ա..., Ղոխնանց Պապը

պատմում եր, մենք ել ականջ եցինք դնում... լավ
պատմող եր»:

Չորում անցկացրած Դոխնանց Պապի հետ այդ
գիշերները հետագայում պատկերել ե իր «Հասա-
չանք» պոեմում:

Բնության դեղեցկությունն ու զյուղի կենցաղը
Թումանյանն ավելի խորը կերպով զգացել ե ու տե-
սել սարերում:

Սարս նրա տարերքն եր:

Սարի սերը վաղ ե զարթնել նրա մեջ ու մնա-
ցել ե միշտ:

«Իմ կյանքի ամենալավ ու քաղցր որերը սարե-
րումն եմ անցկացրել», — տսում եր նա:

«Ուաննեսը շատ եր սիրում սարը անչափ, ան-
հաշիվ»: Սյոպես եր տսում մայրը իր վորզու մասին
խոսելիս:

Եր մանկության շրջանի գարունները թուման-
յանը սարերումն եր անցկացրել, թերես գրա համար
եր, վոր ավելի գարուններն եր սիրում սարերում:
Սիրում եր, յերբ սարերում սկսվում եր փոթորիկի,
կայծակի, ճեղեղի ու տաքափի շրջանը, իերը ջրերը
հորդանում եցին, բնությունը զարթնում — սարերն ու
ձորերը կանաչ հագնում, մեկ թուխապ ու մշուշի մեջ
կորչում, մեկ ել բացվում, պայծառանում՝ շքեղ ու
սիրուն տեսարաններ կազմում, և այդ բոլորից հետո՝
բացվում եր սարի գարնան չքնաղ առավտը — թարմ,
ցողապատ ու բուրավետ, հետոն ել բինաներում զարթ-
նում եր սարվորների կյանքը՝ աշխոյշ, զվարթ ու
կենդանի:

Ավելի հետաքրքրական են ու հեքյաթային սա-

բերի աստղալի գիշերները, որվա աշխատանքից հոգնած սարվորները հավաքված իրենց վրանների առաջ սկսում են շվի ածել, բայաթի կանչել, պարել իսկ մեծերը սարքում են իրենց չիրուխներն ու սկսում են պարզ լեռնական զրուցը՝ համեմած պատկերավոր դարձվածքներով ու առակներով։ Պատմություններ են անում սարերի կյանքից, անցած դեպքերից, իրենց վորսորդական արկածներից, կենդանիների կյանքից և այլն։

«Ե՞ս, ե՞ս... կրակ եյինք անում, շուրջը նստոտում մինչև կես գիշեր զրից անում, հեքիաթ ասում. վորը չիրխին եր զոռ տալի, վորը քնում եր... քեռի Յեղեկն ել շվի լեր ածում...»

Հովհ. Թումանյանն այսպես եր հիշում սարերում անցկացրած իր գիշերները։

Սարերում սարվորները հաճախ մութ գիշերներին ականատես են լինում զանազան գեղքերի՝ աղջիկ փախցնելուն, գողության «հավարի», վրա տալուն, հաբա տալուն—ու խանգարվում ե սարվորների գիշերվա խաղաղ կյանքը։

Ինչպես սարերում, այնպես ել գյուղում, քնելով բաց յերկնքի տակ—խաղաղ աստղաշատ գիշերներին Հովհաննեսը հաճախ մտորումների մեջ ե ընկնում և աստղազարդ յերկնքի տպավորության տակ գրում։ Ե զանազան փոքրիկ բանաստեղծություններ։

Սարերում թումանյանն իր պապի ու տատի, իր քեռիների շբջանումն ե ապրել։ Իր խաղընկերն ե յեղել գառնարած Նիկալը,—վորի հետ զառներ ե պահել սարերում։

Քեռիները փորձված վորսկաններ ու հովիվներ

հն յեղել, հաճախ իրենց հետ Հովհաննեսին սարերն հն տարել ման ածելու.

«... Քեռիս ինձ տանում եր, ման ածում գառների մեջ. հետը հանդից հազարձի կարմիր ճյուղեր եր բերում ինձ համար, իսկ իրիկունները հանում եր սրինդն ու ածում:

Աւ աստղալի, լուսնյակ գիշերները, ահապին խարուկի շուրջը բոլորած, ծափ ելին տալի, խնդում եյին իմ պապն ու տատը, իմ քեռիները, իսկ յես թիթեռի նման թրվում, պար ելի գալի նրանց շըրջանի մեջ»:

Իսկ յերբ աշակերտ եր Թուժանյանը, քեռիներն իրենց հետ նրան սարերն եյին տանում վորսի:

Նա սիրում եր վորսն ու վորսորդական կյանքի հետ կապված թափառումներն ու արկածները: Քեռիներից մեկը պատմում եր.

— Աշակերտ վախտը, գյուղն եր գալիս թե չե, գնում ելինք վորսի:

Շատ եր սիրում վորսը. թվանքի հետ ել շատ եր լավ՝ տեղին տվող եր: Են ա թվանքը վեր եր առնում, հանդերը-սարերը դուրս գալի:

Մի որ ել գնացինք հեռու աճարկուտը վորսի գիշերը վոր վրա հասավ, մնացինք ծմակումը: Մութ գիշեր ա. ինքն ել շատ վախտուկ յերեխա. քնելուս թե՝ լիս մեջտեղը քնեմ, դուք զրազներից, գելը վոր գա, առաջ ձեզ ուտի: Վախելուց են սաղ գիշերը քընեց գոչ, մենք ել հետը»:

Վորսի ժամանակ մոտիկից գիտել ե կենդանիներին, փորձված վորսկաններից կենդանիների կյանքից պատմվածքներ ե լսել և հետագայում այդ

ըոլքը պատկերել իր յերկերում, ինչպես— «Արջավորսը», «Գելը», «Յեղերուն», «Շունը» և այլն:

Թումանյանը վորսը սիրում եր վաշ թե վորսը, վորսե կենդանի կամ թռչուն սպանելը այլ պարզապես թափառութիւները՝ Լոռու խիտ անտառներում, ձորերում և մութ ծմակներում:

Նա զատ եր սիրում անտառը, ավելի սաղարթախիտ, թավ անտառը: Անտառի յուրահատուկ բույրը, ծառերի ստվերը, տերենների հովը, վճիտ ու պարզ աղբյուրները և հեռվից վայրի թռչունների ձայնը, ծկլթոցը...

Առանձնապես դուռը եր դալիս նրան ուշ աշնան անտառը—դույնզգույն տերեններով—կանաչը գեղին, կարմիրի, վոսկեղույնի հետ և անտառի մեզմ դուրիկան ողը՝ հագեցած կանաչի ու հողի զնչով:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Սակայն, գեղեցիկ ու փարթամ բնության ծոցում ապրելով, մանուկ Հովհաննեսի որերը միշտ ել անհոգ և ուրախ չեն անցել: Վաղ մանկությունից նա շփում և գլուղացիների հետ, լսում և ժողովրդի կենդանին խոսքը, մոտիկից դիտում տեսնում և զյուղացիների չարքաշ, նեղ ու դժար կյանքը: Նա տեսնում եր, թե ինչպես գյուղացուն կեղեքում ու շահագործում են քյովաներն ու տերտերները, գյուղի վաշխառուները և պետության պաշտոնյաները: Այդ տըպավորությունների արդյունքն է 17 տարեկան հասակում գրած «Գութանի յերգը», վորի մեջ աշխա-

տավոր ու չքավոր գյուղացին խոսում եւ իր ցավերից
ու կարիքներից.

Պարքատեր գանգատ գնաց,

Քյօրիվեն կըգա, կրծեծի,

Տերեն որհնեց, անվարձ մընաց,

Կըբորկանա, կանիծի:

Թումանյանը գյուղում մի թախծալի ու տխուր
հառաջանք եր լուսմ շուրջը շարունակ - գյուղացու հո-
րովելը՝ տխուր ու միալար, հովվի սրինգը՝ վշտու և
թախծու, ձորի ծեր այգեպանի գանգատը՝ հառաջան-
քով ու դառն հեծեծանքով լիքը... նա տեսնում եր
բազմահոգ գյուղացու դառն ու դաժան կյանքը, նրա
ճակատի մութ ամպերն ու կնճիռները: Այդ ամենը
Հովհաննեսի զգայուն ու տպավորիլող հոգում անչնջե-
լի հետքեր են թողնում, վորոնք, հետպայցում իրենց
արտահայտությունն են գտնում նրա զրվածքների
մեջ: Նրա պոկհմներից մեկի ան ւնն ել հենց «Հառա-
ջանք» և, վորի մեջ լսում ենք ութսունամյա չար-
քաշ գյուղացու հառաջանքով լի՛ ձայնը.

Ես իուր ձուերամ

Ես ե չորս խան տարիս լրացալ,

Վոյ մի խնդություն տեսա իմ որում,

Վոյ ել մի անգամ աշխ լիացավ:

Ամբողջ ամառը առանց տամիեր

Պրտիս եմ գալի ես ձորի միջին,

Վրուիս եմ տալի նազար ցավի հետ

Ու չեմ կարենում — չեմ նասնում վերջին:

Թումանյանի մանուկ հասակի տխուր տպավո-
րությունների արտահայտությունները տեսնում ենք

աև նրա առաջին պոեմի՝ «Մարտ»ի մեջ։ Մարտն
Թումանյանի մանկության ընկերներից եւ, իննը տա-
րեկան Մարտին ամուսացնում են «աժդահա» չորսն
Կարպի հետ։ Մարտն չկարողանալով տանել անքնա-
կան այդ վիճակը, փախչում է ծորերում թափառում և
քարափի գլխից իրեն ցած դցելով՝ ինքնասպանու-
թյուն եւ գործում։ Թումանյանին խորապես ազգում
և գյուղական աղաթի ու տղիտության այդ զոհի—
Մարտի տխուր պատմությունը։ Նա գրում եւ «Մա-
րտ»։ Իր պոեմի սկզբում վշտով ու թախիծով և հի-
շում իր հերոսուհուն։

Մարտ, անքայս, վաղամեն,
Դու մանկության իմ լոկեր,
Վորեան ենք մենք խաղացել,
Երար սիրել ու ծեծել...

Ահա Նեսոն, Հովհաննեսի մանկության շրջանի
մի ուրիշ ընկերը—Նեսոն գյուղի ընդունակ յերեխա-
ներից եր, նա նույնպես զոհ և դառնում հին գյուղի
չքավորությանն ու տղիտությանը։

Նեսոն գուրս և մնում զպրոցից, վորովնետև հայ-
րը չի կարողանում վճարել ուսման վարձը՝ տարե-
կան յերեք ոռութին։ հետեանքն այն եւ լինում, վոր
Նեսոն մնում և անուսում, բռնում և գողության ճա-
նապարհը։

Իր մանկական հիշողություններից պրած «իմ
ընկեր Նեսոն» պատմվածքում Թումանյանը մի ա-
ռանձին կարեկցությամբ և խոսում Նեսոյի դժբախտ
կյանքի մասին, շեշտելով, վոր Նեսոյի կյանքի վատ
ճանապարհ բռնելը հետեանք եր նրա նյութական
անապահով դրության։



Թումանյանը Դսեղում

Նեսոն աղքատ ե... Նեսոն տղետ ե... Նեսոն
լցված ե գյուղական չարքաշ կյանքի գառնություն-
ներով... Նա լել յեթե ուսում առներ, կրթվեր, ա-
պահով լիներ՝ լավ մարդ կլիներ, զուցե ինձանից ել
շատ ավելի լավը...»

Մի գաղություն անելու պատճառով խիստ պատ-
ժի յեն լննթարկում Նեսոյին. Ծեժ այրող արևի տակ
թոկով կապում սնից:

Այդ պատկերը չի հեռանում Թումանյանի մըտ-
քից. Նա հետագայում ել, յերբ արդեն հոչակված բա-
նաստեղծ եր, միշտ սիրով եր հիշում մանկության
ընկեր Նեսոյին, և ցավում եր վոր չքավորության
գոհ դարձագ «մաքուբ ու միամիտ» Նեսոն...



Թումանյանը Դսեղում

Նեսոն աղքատ ե... Նեսոն տղետ ե... Նեսոն
լցված ե գյուղական չարքաշ կյանքի դառնություն-
ներով... Նո յել յեթե ուսում առներ, կրթվեր, ա-
պահով լիներ՝ լով մարդ կլիներ, գուցե ինձանից ել
շատ ավելի լավը...»

Մի գողություն անելու պատճառով խիստ պատ-
ժի յեն յենթարկում Նեսոյին. թեժ այրող արեի տակ
թոկով կապում սնից:

Այդ պատկերը չի հեռանում Թումանյանի մըտ-
քից. նա հետագայում ել, յերբ արդեն հոչակված բա-
նաստեղծ եր, միշտ սիրով եր հիշում մանկության
ընկեր Նեսոյին, և ցավում եր վոր չքավորության
զոհ դարձավ «մաքուք ու միամիտ» Նեսոն...

Սիրել և նա և գյուղի հարսանիքը՝ զուռնա-գնու-
լով ուրախ շուրջպարն ու կոխը:

ԴՄԵՂԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Գյուղում, հայրական տանը, թուժանյանը կա-
նոնավոր կրթություն կամ մտավոր լուրջ զարգացում
չի ստանաւմ: Հնարավորություն ել չի յեղել. գյու-
ղում այդ ժամանակ օվոչ ուսումնարան կար, վոչ
դաս, վոչ դաստիարակություն»:

Նրա դպրոցը տունն եր, գյուղական միջավայրն
ու լեռնական հարուստ բնությունը. նրա ուսուցիչ-
ներն եյն՝ հայրը, մայրը, տատերը և գյուղի հեք-
յաթ պատմող ծերերը:

Իբեն շրջապատող այդ մարդկանցից—գյուղա-
ցիներից և առանձնապես իր նորից ձմռան յերկար
զիշերները լսում եր յերգեր, հեքյաթներ ու առակ-
ներ և լցվում ժողովրդական ստեղծագործության շնչով
ու վողով:

Ժողովրդից լսած այս զրույցներն ու հեքյաթ-
ներն են, զոր դառնում ե բանաստեղծի ստեղծագոր-
ծության առաջին և հիմնական աղբյուրներից մեկը:
Մանկության որերի տպագորությունները խոր ար-
մատներ են ժողնում նրա հոգու մեջ և հետագալում
նա վճռ միայն չի կտրվում այդ առողջ աղբյուրից,
այլև գիտակցորեն ավելի յե խորացնում և ուժեղա-
ցնում այդ կապը: Նա նորից ու նորից և վերադառ-
նում դեպի նա, այս անդամ հիմնավոր կերպով ու-
սումնասիրելու իր հարուստ տպագորությունները լը-
րացնելու համար:

Այդ ե պատճառը, վոր հետագայում թուման-
յանը ժողովրդական բանահյուսությունը— ֆոլկլորը
ստեղծագործողի համար, համարում եր ամենաթանգ
և կարեռ աղբյուրը, վորից միշտ ջուր պիտի խմի
ամեն մի դրող ե բանաստեղծ:

Թումանյանի հայրը թեև գյուղի զբագետներից
եր համարվում, բայց քաղաքից կտրված լինելով
զբականություն քիչ ուներ, յեղածն ել ավելի
գան գրքեր ելին, ինչպես Սաղմոս, Ժամագիրք
և այլն։ Հոր գրքերից առաջինը, վոր Հոգհաննեսը
կարգացել ե, Հասան-Զալալյանի «Ճանապարհորդու-
թյուն ի մեծն Հայաստան» գիրքն ե լեզեր։ Այդ գըր-
քի ընթերցանության տպավորության տակ նրա մեջ
շատ վաղ հասակում սեր ե զարթնում գեպի անցյալի-
ուսումնասիրությունը, վորի մեջ խորանալուն պատ-
տում են պատմական հուշարձաններով և արձանա-
զրություններով հարուստ Լոռու ըրջանի գյուղերն ու
վայրերը։

Թումանյանն իր նախնական գրաճանաւությու-
նըն ստանում ե հօր մոտ Այնուհետև նա ութ տա-
րեկան հասակից գրել-կարդալն սկսում ե սովորել իր
հորեւրայր Գրիշկա բիծու նորաբաց դպրոցում։ Գու-
րիշկա բիծան գյուղի տիրացուն եր, նա գյուղի յե-
րեխաներին հավաքել ե և իրենց տան ոդո մ դպրոց
բաց արել։ Այդ դպրոցում մատիտները ա, ճիճից եյին,
թանաքը՝ կակաչ ծաղկից, վոր իրենք, աշակերտներն
եյին պատրաստում։

Բացի գրել-կարդալուց, Թումանյանը Գրիշկա
բիծու մոտ սովորել ե նաև յերգել Սակայն, աշա-
կերտները հաճախ դասերին կատակներ ու չարաճախ-

ություն եյին անում, ոգտվելով իրենց ուսուցչի թույլ ու խեղճ բնավորությունից:

Թումանյանը Գրիշկա բիհու դպրոցում մնում է միայն մի քանի ամիս, նա այդտեղից շատ քիչ բան է տանում, վորովհետև «ուսուցիչն» ել հազիվ զրածանաչ մի տիրացու եր:

Այնուհետև Թումանյանին տալիս են Սահակ վարժապետի զպրոցը, ուր մնում է յերկու տարի: Այդ դպրոցը նույնպես առանձին բան չի տալիս նրան:

Սահակ վարժապետի դպրոցի պատմությունը Հովհ. Թումանյանն իր ինքնակենսագրության մեջ հետեւյալ ձեռվ ե պատմում:

«Մի որ ել մեր դուանը մայրս ճախարակ եր մաշնում, յես խաղում եյի, մին ել տեսանք, քոշերը հագին յերկար մաղերով ու միրուքով, յերկաթե գալազանը չըխկաղնելով՝ մի ոտարական անցավ:

— Հասիր, եղ կլեկչուն կանչիր, ամանները ոտանք կլեկի», — ասավ մայրս: Խաղս թողեցի, ընկա ուստի յետելից, կանչեցի: Դուրս յեկավ վոր կլեկչի, այլ՝ մեր ազգական փեսա՝ տիրացու Սհակն ե Սկսեցի զրույց անել: Տիրացուն խոսք բաց արավ իր դիտության մասին:

— Տիրացու ջան, բա ի՞նչ կլի, մեր գեղումը մնաս, յերեխանցը կարդացնես, — խնդրեց մայրս:

— Վոր դուք համաձայնվեք, ինձ պահեք, յես ել կմնամ, ի՞նչ պետք ե ասեմ, — հայտնեց տիրացու Սհակը:

Գլուղում ել տրամադրություն կար, և մի քանի տրից հետո, տիրացու Սհակը դարձավ Սհակ վարժապետ:

Մի ոթախում հավաքվեցինք մի խումբ յերեխաներ, տղա ու աղջիկ շարեցին յերկար ու բարձր նըստարանների վրա, յեղավուսումնարան, և այստեղից սկսեցի յես իմ ուսումը:

Մեր Սհակ վարժապետը մեղ կառավարում եր «գալազանաւ յերկաթհաւ»: Իր յերկաթե գալազանը, վոր հրացանի շամփուրի յեր նման, յերբեմն ծռում եր յերեխանների մեջքին. ականջները «քոքըհան» եր անում, և մեծ կաղնենի քանոնով «շան լակոտների» կաշին պլոկում: Յես չեմ կարողանում մոռանալ մանակավարժական այդ տերրորը:

Վարժապետի առջև կանգնած յերեխան սխալ եր անում թե չե՞ սարսափից իրան կորցնում եր, այլևս տնկարելի յեր լինում նրանից բան հասկանալ, մեկը մյուսից հիմար բաներ եր դուրս տալի: Այն ժամանակ կարմրատակում, սպառնալի՝ չուխի թերը յետ ծալելով, տեղից կանգնում եր վարժապետը ու բռնում. . Քիթ ու պռունկն արյունոտ յերեխան, գալարվելով բառանչում եր վարժապետի վոտների տակ, զանգան սրտաճմլիկ աղաչանքներ անելով, իսկ մենք, սիրը թընած, թուքներս ցամաքած, նայում եյինք՝ ցրտահար ծտերի նման շարված մեր բարձր ու յերկար նստարանների վրա: Զարդած յերեխային վերցնում եյին մեջտեղից:—«Արի»,—դուրս եր կանչում վարժապետը հետեյալին...

Մի յերեխայի ուսումնարան դրկելիս, հայրը խըրքատել եր, թե «վարժապետն ինչ վոր կամի, դու յել են ասա»: Յեկավ:

Վարժապետն ասում ե՞ «Ասա այր»:
Նա ել կըկնում ե՞ «Ասա այր»:

— Տան, շան դավակ, յես քեղ եմ ասում՝ «Ասա
ալլ»:

— Տան, շան դավակ, յես քեղ եմ ասում՝ «Ասա
ալլ»:

Այս յերեխայի բանը հենց սկզբից վատ գնաց, և
այնքան ծեծ կերավ, վոր մի քանի ժամանակից «դա-
շաղ» ընկավ, տնիցն ու գեղիցը փախավ, հանդերումն
եր ման դալի: Բայց մեր Սահակ վարժապետի չարու-
թյունից չեր դա: Այս տեսակ անսաստած ծեծ այն ժա-
մանակ ընդունված եր և սովորական բան եր մեր գյու-
ղական ուսումնարաններում: Գյուղացիներից ել շատ
քչերն եյին բողոքում: Այդ ծեծերից յես չկերա, վո-
րովհետև վարժապետը քաշվում եր հորիցս, բայց մա-
նավանդ մորիցս եր վախենում»:

Ինչպես տեսնում եք, Տեր-Թողիկյան տիպիք
դպրոցներից եր Սահակ վարժապետի դպրոցը: Գոր-
ծադրովում եյին նույն «մանկավարժական մեթոդնե-
րը»՝ ծեծ գավազանով, հայհոյանք և դրա հետ միա-
սին՝ մտավոր չնչին պաշար: Սահակ վարժապետը
սովորեցնում եր գրել, կարդալ, բայց համարյա բոլոր
դասագրքերը կրոնական բովանդակություն ու-
նեյին:

Տետրերի վրա նկարված եր խաչ և վրան գրված
«Տեր ոդնյա մեղ»:

Թումանյանի դասրնկերներից մեկը, վոր այժմ
կենդանի յե, Գարո բիձեն, այսպես և պատմում իւ-
րենց դպրոցի մասին:

«Առավոտները վեր եյինք կենում, վառարանը
վառում, ողեն սրբում, տաքացնում: Կերթով վարժա-
պետի համար մածուն ու հաց եյինք բերում, մեկ-

մեկ ել մեր տան վայտից դպրոցի և վարժապետի տան վառարանի համար՝ փայտ, իսկ ամառները գըշում ելինք դյուղի հանդերը՝ վարժապետի համար մոռ ու մոշ բերելու, ենպես, վոր մեր դասերի համար քիչ ժամանակ եր մնում»:

Ժամանակի պատմական դեպքերից թումանյանի վրա մեծ տպավորություն ե արել 1877—1878թթ. պատերազմը: Այդ դեպքից ազգված ինքն ել սկսել ե գրել վոտանավորներ: Իր առաջին գրական փորձերի մասին նա հետեւյալն ե ասում:

«Ճատ վաղ եմ սկսել վոտանավորներ գրել: 10—11 տարեկան ժամանակս Լորիս-Մելիքովի վրա յերգեր ելին յերգում ժողովրդի մեջ: Այդ յերգերին աներ ելի ավելացնում ե գրում ելի զանազան վոտանավորներ—յերգիծարանական, հայրենասիրական և սիրային»:

Յերբ թումանյանը 10 տարեկան ե դառնում, 1879 թ. ոգոստոս ամսին, հայրը նրան տանում է Էջմիածին Դմորգյան ճեմարանը գիշերոթիկ տալու, բայց հայրը այնտեղ տեսնելով փառաջավոր աշակերտների դեղնած դեմքերը, և նրանցից մեկին ել մեռած, Հովհաննեսին հետ ե ըերում դյուղը:

«Մի անգամ շատ փոքր եղմիածին եմ յեղել—պատմում ե թումանյանն այդ որերի իր տպավորությունների մասին,—միտս ե միայն հորաքուրս ու ժեսա Վարդանը, նրանց տունը, նրանց դեղին կավե պարիսպն ու պարտեզը, սև բաղրիջանի ու պամիկորիթի թփերը և նրանց հոտը, կուռկուռները, Եջմիածնի տաճարի ներսը, փոշոտ ու արևոտ ճամբեն, փշատի և նոռան ծառերը»:

Նոներ ու դեղին փշատ, Աշտարակը...»

Եջմիածնից Դսեղ վերադառնալուց հետո, հայրը լսելով Զալալ-Ռղլու նորաբաց դպրոցի մասին, նույն թվականի աշնանը Հովհաննեսին, նրա փոքր յեղբոր հետ, տանում է Զալալ-Ռղլի (այժմ Ստեփանավան) և տալիս է այն ժամանակ Լոռում հայտնի Տիգրան-վարժապետի յերկսեռ դպրոցը:

Թումանյանն իր կենսագրական «յութերի մեջ հետեւյալ ձեռվ է հիշում գյուղից հեռանալու նախընթաց գիշերը»:

«Զալալ-Ռղլի տանելու նախընթաց գիշերը՝ գաղաթա, թխվածք, ամեն բան պատրաստ:

Մորս քունը չի տանում: Աղ է աղում յերկանքով, լաց է լինում ու խոսում մեղանից իրեն-իրեն մենակ: Յես ել անքուն տեղիս միջին լաց եմ լինում» ծամբին ձյուն ու քամի:

Յերկուսիս՝ ինձ ու իմ յեղբորը ձիու վրա դրած իրեն փարաջեն ել հանած մեղ վրա գցած, ինքը վոտով ցեխի ու ձյունի մեջ գալիս եր կողքով ձիու հետ վոտով:

Նրա սպիտակ մեծ միրուքը ձյունախառն քամին ցըիվ եր տալիս, կրծքին խփում, ուսով տանում:

Եղ գիշեր հասանք Քոլագերան, մի տաք ողա»

ԶԱԼԱԼ-ՌՂԼՈՒՄ

Զալալողին այդ ժամանակ Լոռու վարչական-կուլտուրական կենտրոնն եր այդտեղ եյին գտնվում դավառի դատաստանական վարչական բոլոր հաստատությունները, նաև զորքը:

1879 թ. աշնանը Տիգրան Տեր-Դավթյանի ջանքաբով Զալալ Ռուսական պատմություն է առաջին յերկու համար չորսդասլան դպրոցը։ Ավանդվում եր հայոց լ'զու և պատմություն, ոռւսաց լեզու, աշխարհագրություն, թվաբանություն, յերգեցողություն, ֆրանսերեն, ֆիշիկա, ընդհանուր պատմություն և այլն։ Դպրոցի սեսուչը ինքը Տեր-Դավթյանն եր, վորը ժամանակի կրթված մարդկանցից մեկն եր, ավարտել եր Խալիբյան վարժարանը, ճանապարհորդել եր Յեղիպտոս, Աթենք, Պոլիս, Նա զպրոցին կից ուներ հարուստ գրադարան, վորից ոգտվում ելին աշակերտները։

Ահա այդ դպրոցն ե ընդունվում 11 տարեկան Հովհաննեսը։



Թումանյանի հորաքը տունը,
ուր ապրել է նա 1880-81 թ. թ.

Թումանյանը «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքում
նկարագրում է Զալալ Ռղլի դալը և իր առաջին տը-
պավորություններն այդ գյուղաքաղաքից ու դպրոցից.

«Մի յերկու տարի մեր գյուղի ուսումնարանու-
մը կարդալուց յետը, հերս ինձ տարավ մեր կողմերի
գյուղաքաղաքը, ենտեղի ուսումնարանը տվավ։ Ես
արդեն բոլորովին ուրիշ աշխարհք եր, Տները սիպտակ.
Կարմիր տանիքներով, ժողովարդը զուգված ու մա-
քուր, ուսումնարանն ել մեծ ու գեղեցիկ, ու վոչ թե
մի վարժապետ, ինչպես մեր գյուղումն եր, այլ մի
քանի վարժապետ ու մինչև անգամ վարժուհիներ,
զոր նորություն եր ինձ համար ու զարմանալի, սա-
կայն շատ դուրեկան։

Տեղին ու դպրոցին վայել իմ հագուստը փոխե-
ցին։ Քաղաքացին աշակերտի շորեր հագա, գեղեցիկ,
մաքուր»։

Հայրը վորդուն տալիս և մի կոշկակարի տանը
բնակվելու։ Թումանյանն այդտեղ մնում և շատ կարճ
ժամանակ, վորդինեան բազմամարդ ընտանիքը և յե-
րեխանները նրան խանգարում են դասեր պատ-
րաստելուն։ Այնուհետև Հովհաննեսը փոխադրվում և
իր հորաքը Թալալ հոքրի (Սաղաթելյանների)
տունը, վորը գտնվում եր Զորագետի ափին, բարձր
ժայռի գլխին։

Թումանյանի հորաքույրը, վորին Թալալ նանի
եցին ասում, նրա դասընկերների պատմելով մի շատ
քարի, սիրալիր կին եր, Առանձին գուրգուրանք ու-
ներ մանուկների նկատմամբ, նրանց սեր ու մածուն
եր տալիս, հեքիաթներ եր պատմում՝ կախարդական
աշխարհքից, ոձերից ու նրանց թագավորներից։ Խո-

առւմ եր սատանանիրի մասին, թե ինչպես նրանք գումանադհոլով խաբում են մարդկանց և տանում հարսանիք:

Այս բոլորը ուժեղ ազգեցություն եյին անում Թումանյանի վրա և նա իբ վառ յերեակայությամբ լրացնում եր այդ հեքյաթները:

Նույնպես մի կարճ ժամանակ ապրելով հորաքը բողոք տանը, դժոհում և այդ տանը մի հիվանդի ծանր տպավորությունից, ու փոխադրվում և մի ֆուրդոնշչիկի տուն, վորի բնակարանը նույնպես գետափին, մի բարձր ժայռի գլխին եր գտնվում, վորտեղից մի շատ դեղեցիկ տեսարան եր բացվում գեղի լուսու գաշտերը և լսվում եր գետի վշտոցը: Այդ տանն ել մնում և մինչև Զալալ-Ռզլուց հեռանալը:

Թումանյանը դպրոցում ընդունակ աշակերտներից եր, թեև թվաքանությունից և ոռւսաց լեզվից թույլ եր, բայց մյուս առարկաներից, հատկապես հայոց լեզվից և պատմությունից շատ ուժեղ եր: Փաքրիկ Հովհաննեսը առանձնապես սիրում եր Տեր-Դավթյանի պատմության դասերը և հափշաակությամբ լըսում նրա պատմածները Յոգիպտոսից, Յեգիպտոսի բուրգերից, Նեղոս գետից, դամբարաններից, այդ բոլորը նրա վրա խոր տպավորություն և անում: Նա այնքան և վոգեորվում այդ պատմություններով, վոր վորոշում և գնալ Յեգիպտոս՝ իր հետ տանելով իր դասընկերներին: Այդ ցանկությունը յերկար ժամանակ մնաց Հովհաննեսի մեջ:

Յերկրորդ դասարանից, 1880—81 թթ. Թումանյանը սկսում և գրել ինքնուրույն վոտանավորներ: Դասընկերները պատմում են, թե ինչպես նա դասա-



Դպրոցին կից գըաղաբանը – տեսչի բնակարանում՝

միջոցին դասարանից դուրս գալով, առանձնանում՝ եր, զպրոցի բակի ծառերից մեկի տակ նստում և սկսում զբել իսկ իրենք աշխատում ելին խանգարել նրան:

Յերկրորդ դասարանում յեղած ժամանակ՝ 1881 թվի մարտին Թումանյանը գրում է իր առաջին սիրային վոտանավորը՝ վորը նվիրված եր իր դասընկեր բուհիներից մեկին: Ահա այդ վոտանավորը.

Հոգուս հասոր,

Սրբիս կրտոր*),

Դասիս համար

*.) Այս յերկու տողն ընդհանըցած առղեք ելին, վարով ժամանակի սիրահորներն սկսում ելին իրենց նամակները:

Դու մի հոգար.
Թե կան դասեր,
Կա նախի սեր,
Յեվ ինչ զարմանք.
Խմ տղավճյուկ,
Վոր կենդանի
Մի պատանի
Սերը սրտում՝
Դաս է սերտում:

Թղթոցի տեսուչ Տիգրան Տեր-Դավթյանը իւ-
մանալով, վոր Թումանյանը վոտանավորներ և գրում,
աշակերտներից յերկուսին լրտես և նշանակում, վոր-
հետեւն և բռնեն նրան «ճանցագործության» ժամա-
նակ:

«Հոգուս հատոր» վոտանավորի մասին Թուման-
յանն իր հուշատետրերից մեկում գրում է հետեյալը.

«1881 թվին այդ վոտանավորը բռնեցին Հըմա-
յակն ու Միքայելը. մեր տեսուչ Տիգրան Դավիդիչը
ինձ ուղում եր ոողգի տալ, բայց լացով պրծածած:

Զալալ-Ռուլու դպրոցում յեղած ժամանակ, ա-
շակերտական նստարանի վրա, Թումանյանը գրում է
մի քանի այլ վոտանավորներ, վորոնցից մեկը նվի-
րում և մի հույն քարհատի՝ Սավա վարպետին. այդ
վարպետը աշխատում եր Զալալ-Ռուլուց դեպի Քուա-
գերան կայարանը տանող խճուղու վրա և զոհ և դառ-
նում աշխատանքի ժամանակ պայթած քարերին: իսկ
մի ուրիշ վոտանավորի մեջ նկարագրում է առանց
սաստիկ փոթորիկին զոհ գարձած մի իշուկի մահը:
վորն ազդել եր Թումանյանի վրա:

Բացի «Հոգուս հատորից», այդ վոտանավոր-

Ներից մեր ձեռքն և հասել նաև «Հայ վաճառական» վոտանավորի ձեռագիրը, վորը դրված և նույնպես Զալալ-Ռում 1883 թվին:*)

Այդ վոտանավորների մեջ բանաստեղծը ծաղրի յե յենթարկում Զալալ-Ռում վաճառականներին, վորոնք հաղար ու մի ճարպիկություններով ու խորամանկություններով խարում ելին խեղճ գյուղացուն և ոռւս զինվորներին:

Իր մի ուրիշ վոտանավորի մեջ Թումանյանն արտահայտել ե բնության սերը, յերգելով Զորագետը և նրա ձորը: Այդ վոտանավորը մեզ չի հասել:

Դպրոցում, դասերից գուըս, աշակերտների մի խումբ յերեկոները հավաքվում եր տեսչի տանը և նրա յերեխաների հետ միասին պարապում ընթերցանությամբ: Կարդում ելին, «Հյուսիսափայլ», «Կոռուկ» «Փորձ» և այլ ամսագրերի համարներում զանազան թարգմանություններ ու փոքրիկ պատմվածքներ: Երա դասընկերուհիներից մեկը՝ Վարսենիկ Գեղվորդյանը, վորը տեսչի փոքր աղջիկն եր, մի առ մի հիշում ե և թվում այն ժամանակ կարդացած զըրքերը՝ Ա. Դյումայի «Յերեք հրացանակիրը» և «Քսան տարի յետքը», Եռժեն Սյուի «Փարիզի գաղտնիքները», «Բոռը», «Զեստերտոնի ժառանգը», «Խավարից ղեղիլուս», «Ինկվիզիցիալի գաղտնիքը», «Կոմսուհի Ռուսուսուն», «Պող և Վերգինեն», «Ծորինզոնը», «Քրիս-

*) Զալալ-Ռում շրջանի համար ողտղել ենք նաև Թումանյանի դասընկերուից՝ Վարսենիկ Գեղվորդյանի և Սարգս Արովյանի հուշերից:

տափոր կոլումբոսի ճանապարհորդությունը», Ծերենցի «Յերկունքը», Ղ. Աղայանի «Յերկու քույրը», Բիշեք Ստոռուի «Քեռի Թովմասի տնակը» և այլն:

Այդ աշակերտական խմբի համար չափածո յերեկոր թումանյանն եր կարգում։ Նա զեռևս այն ժամանակ սիրում եր կարդալ վոտանավորներ, բայց մանաւանդ դրամաներ։ Նրա սիրած գրքերից եր «Քընար Հայկականը» վորտեղից հատկապես մեծ սիրով եր կարգում Սայաթ-Նովայի տաղերը և իր ընկերների համար Թիֆլիսի բարբառից վեր և ածում դրականի։ Այնուհետև սիրում եր կարդալ Միքայել Նալբանդյանի վոտանավորները, նրա կենսագրությունը, Փ. Քաթրալայի «Շիւականի լերգը»։ Առանձնապես սիրում եր կարդալ «Քնար Հայկական»-ում յեղած ժողովրդական յերգերը և յերգիծարանական վոտանավորները։

Նա շատ եր կարգում Գևորգ Բարխուդարյանի թարգմանած Շիլերի գործերը, վորոնցից հավանում եր, հատկապես «Ավագակները» և «Որւյանի կուսը»։

Բացի ընթերցանությունից թումանյանը շատ եր սիրում և հեքյաթն'ը լսել։

Աշակերտն ըն ապատ ժամերին հավաքվում եյին գողրոցի պահակի մոտ, վորին քեռի Ակոփ Եյին առում, ու լսում եյին նրա պատմած հեքյաթները, Քեռի Ակոփը պատմում եր «Գյուլի բաղի», «Արարի զանգույի», «Դուղի Ղուշի» և ուրիշ հեքյաթներ։

Բայց ավելի հստաքբարի հեքյաթներ եր պատմում դողրոցի վառարաններ նորոգողը Ուստա Սիմոնը, վորը Գյառողյառ զյուղիցն եր։ Ուստա Սիմոնը շատ

զրավիչ ու հետաքրքիր կերպով պատմում եր «Հազար ու մեկ գիշերվա» հեքյաթներից, վորոնք փոքրիկ ունկնդիրների կողմից լսվում եյին մեծ սիրով և ուշադրությամբ։ Ասում են, Թումանյանը շարունակ ուստա Սիմոնի հետն եր լինում և սիրում եր նրան։

Թումանյանը Զալալ-Ռոլումն և լսում առաջին անգամ «Քաջ Նազարի» հեքյաթը, բայց վոչ ուստա Սիմոնից, այլ մի պոլսեցի բուժակից, վորը այդ ձմեռ կարճ ժամանակով հայտնվում է կոռում և հյուր և մինում գպրոցի տեսչի տանը։ Զմռան յերկար գիշերներին իր շուրջը հավաքած գպրոցի յերեխաներին, այդ պոլսեցի բուժակը վոգեորված աշուղ Դարիբի խաղերն ե ասում, հեքյաթներ ու ծիծաղաշարժ գեպքեր պատմում Քաջ Նազարի արկածներից։

«Թումանյանը շատ եր սիրում յերգել յերգում եր և մեզ ել ամեն անգամ նոր յերգեր սովորեցնում։ —այսպես ե պատմում նրա գասընկերներից մեկը։

Յերգերից հիշում եր՝ «Մեր ձագուկը փոսում նստած», «Մանկության որեր», «Ե՞ր հեռանաս», «Ցուրտը փշեց»։ Առհասարակ նա յեր մեր խումբը կառավարում։ մեծ ու փոքր նրա շուրջն եյինք»։

Ենունետև գնում եյինք շրջակա ձորելը խաղալու և վազվակելու։ Գնում ելինք «Գոմերի ձորը», «Զալալ-Ռոլու ձորը»,—գետում լողանոմ եյինք, թըրթընջուկ քաղում, լվածաղիկ հավաքում, բերում գյուղը և փոխում նկարների»։

Բնության սերը, վոր զարթել եր Թումանյանի մեջ դեռևս փոքր հասակում, ավելի յե խորանում այստեղ։ Նա հաճախ եր հիշում իրենց գյուղն ու սարերը, պատմություններ եր անում իրենց սարերից ու անտառներից, վորսից ու սարի կլանքեց».

աւրի յեղնիկնե ից: Նա իր ընկերներին հավաքած առանձին վոգիորությամբ և համով ու հոտով պատմում եր զյուղական կյանքից դեպքեր ու անեկդոտներ, զեռևս փոքրուց սիրում եր իր շուրջը հավաքել իր հասակակից ընկերներին և պատմել նրանց, գործնք լուրմ եյին նրան մեծ սիրով:

Կենդանիների ձայներից շատ եր սիրում գորտերի կոկոցը, յերբեմն թագնվում եր գաշնամուրի տակ և սկսում եր գորտի նման կոկուացնել ու վախեցնել իր ընկեր-ընկերուհիներին:

Տոների արձակուրդին միշտ Զալալ-Ռոլուց գըն ում եր զյուղը՝ Դսեղ: Գնում եր վոտքով. գիշերը ֆիում եր կուռթան գյուղում, առավոտը ճանապարհը շարունակում գեղի գյուղը: Ամեն արձակուրդի գնալիս, իր գրքերն ել հետն եր տանում, դնելով բրդից գործված պայուսակի մեջ:

Զալալ-Ռոլու դպրոցը, Թումանյանը չի ավարտում: 1883 թվին ցարական կառավարության հրամանով փակվում են բոլոր հայկական դպրոցները, այդ թվում նաև Զալալ-Ռոլու դպրոցը: Թումանյանը վերադառնում է իրենց գյուղը և մի առ ժամանակ մնում է այնտեղ:

1883 թվին հայու տանում և նրան Թիֆլիս:

Իր գասընկերներից մեկը այսպես է հիշում Հովհաննեսի հեռանալը Լոռուց դեպի Թիֆլիս:

«1883 թվին, աշնան մի անձրեալին որ, իր հոր հետ միասին գնաց Թիֆլիս: Մի խումք ընկերներ ճանապարհ դրինք մինչև քարի գլուխը և կամուրջի մոտ բաժանվելիս խմբով յերգեցինք՝ «Ե՞ր հեռանաս Յո՛թաք»:





Զորագետի կամուրջը

բենի աշխարհից..., « ՅԱԿՆԻՎ ԸՆԿԵՐԸ... ԻՆՔԸ ԳՆՈՒՄ
ԵՐ և ասում՝ յես ձեղ կտանեմ : Եզիպտոս ..»

Այսպես բաժանվեցինք մենք նրանից 1883
թվի աշնանը:

Ավելի սրտառուչ և տիտուր ե լինում հայրական-
տնից՝ Դսեղից հեռանալը: Մայրը դեմ ե լինում տղա-
յին գյուղից տանելուն:

«Մի աշնան ցուրտ որ հայրը գորոշում ե տղա-
յին տանել Թիֆլիս, իսկ նանք դեմ եր. ասում եր
տղիս հեռացնիլ մի. տանը կոիվ ընկափ: Հայրը չլսեց.
իրան ասածն արավ. Մի ձի ունեյինք անունը Ղուաթ:
Ոհաննեսն եղ ձիուն նստեց, իսկ հայրը Քյարին ու
նիրկուով ճամբա ընկան դեպի Թիֆլիս:

Նանը կնաց իրանց հորանց թաղերը. տատիւ

հետ նստեց քարին, լուց ելավ, լաց, թէ տղիս տարմն... Մենք ել պուճուր երեխեք եյինք, հետները թռչկոտելով, խաղալով դնացինք մինչև Զաղի ձորը ճամբու դրինք ու լիտ յեկանք տուն»:

Այսպես ե պատմում Հովհաննես Թումանյանի յեղայրը նրա առաջին անգամ գյուղից հեռանալու մասին:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | | | | | | | | | |
|-----------------------------------|---|---|---|---|---|---|---|---|---|---|----|
| 1. Հին Լոռին | . | . | . | . | . | . | . | . | . | . | 5 |
| 2. Պապելլ | . | . | . | . | . | . | . | . | . | . | 19 |
| 3. Հայրը | . | . | . | . | . | . | . | . | . | . | 14 |
| 4. Մայրը | . | . | . | . | . | . | . | . | . | . | 19 |
| 5. Անհոգ յեղնաբաձը | . | . | . | . | . | . | . | . | . | . | 23 |
| 6. Խաղերի ու հեքյաթների աշխարհում | . | . | . | . | . | . | . | . | . | . | 27 |
| 7. Բնության գրկում | . | . | . | . | . | . | . | . | . | . | 32 |
| 8. Գյուղացըների հետ | . | . | . | . | . | . | . | . | . | . | 43 |
| 9. Բնեղի դպրոցում | . | . | . | . | . | . | . | . | . | . | 48 |
| 10. Ջալալ-Ռուսում | . | . | . | . | . | . | . | . | . | . | 54 |



Դաստիարակութեան Հայոց Տարբերակ
Տէսակ Խմբագրի Անուն. Գոտու պատճեն
Սրբագրի Առաջընթացի կամաց

Կոլավումի լիազոր՝ Ա—3050. Հրատ. № 4374.

Պատվեր 1288. Տիրաժ 6000

Թռչղթ 62×94. Տպագրական 4 $\frac{1}{4}$ մամուլ.

Մեկ մամ. 38460 նիշ. Հեղինակային 2 $\frac{1}{4}$ մամ.

Հանձնված եւ տպագրության 2-XII-37 թ.

Ստորագրված եւ տպագրության 20-XII-37 թ.

Գինը 1 80


Պետհրատի տպարան, Յերեվան, Լենինի փող. 65

ԳԱԱՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒ. ԳԻՐԱԴ.



220042599

ԳՐԱՅԻ 1 Ա. 80 հ.



11.24.88

- 50

Հ. ԹՈՒՄԱՆՅԱ
ДЕТСТВО и ЮНОСТЬ
Օ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Гиз Арм. ССР. Ереван 1938